ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5478-Ա « 09 » նոյեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԿԱՐԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՏՈՎԻՑԵ ԵՎ ԳԼԻՎԻՑԵ ՔԱՂԱՔՆԵՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Կարինե Կոստանյանի № Ն/74137-26 գրությունը, «New Europe Foundation»-ի կառավարման խորհրդի նախագահ Ռոբերտ Կլոսովսկիի հրավերը՝ Erasmus+ ծրագրի շրջանակում երիտասարդական փոխանակման ծրագրի նախապատրաստական այց կազմակերպելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Կարինե Կոստանյանին՝ 2026 թվականի նոյեմբերի 19-ից 21-ը ներառյալ գործուղել Լեհաստանի Հանրապետության Կատովիցե և Գլիվիցե քաղաքներ:

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Կարինե Կոստանյանի բացակայության ընթացքում աշխատակազմի հանրակրթության վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ Ելենա Հարությունյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ